№ 163 Սեպտեմբերի 17 (29) 1880 Սեպտեմբերի 17 (29) № 163

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարւանը 6 րուբլ
Առանձին համարները 5 կոպէկ:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ".

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10-2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն: Նամակ Եկատերինոդարից: Նամակ Շուշուց: Նամակ Շամախուց: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Արեւելեան գործեր: Աւստրո-Ունգարիա: Բուլղարիա:—«Մշակի» հեռագիրներ:— Յայտարարութիւններ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐԻՑ

8 սեպտեմբերի

Տասն և վեց տարի անցաւ մեր «Հիւսիսափայլի» դադարելուց յետոյ, տասն և վեց եմ ասում, մի նշանաւոր ժամանակ է հասկացողի համար. ինչ որ էր տասն և վեց տարի առաջ, նորանից փառն ենք տեսնում այժմ:—Զնաշխարհիկն Ս. Նազարեանց միշտ գոչում էր «Ռեֆորմ» հայերիս համար հոգևորականութեան մէջ, բայց նորա ձայնը չը լսելուց յետոյ՝ սկսեցին քարկոծել անմիտ իմաստակները «Մեղուի» միջոցաւ: «Մեղուն» էր նոցա բերանը, «Մեղուն» էր նոցա արձագանք տուողը, այն «Մեղուն», որ միշտ մարդկային գաղափարների, ազգի բարեացակամների թշնամի եղել էր սկզբից, և է այժմ: Ինչ որ էր երբեմն «Մեղուն» «Հիւսիսափայլի» համար՝ այժմ էլ է «Մշակի» համար: Արժէն զզվեցանք նորա հայհոյանքներից:

Մինչ պատուելի «Մեղուի» խմբագիրը կարծում է, թէ նորա անտեղի, անվայել գրուածքներին կարօտ ենք, կամ ուրախութեամբ ենք կարդում. հաւատացէք որ աչքներս փակ դարձնում ենք «Մեղուի» թերթերը, եթէ բովանդակութեան մէջ լինում է, «Մշակի», Ամիրխանեանցի և Մելիքզադէի համար գրուածքներ, հաւատացած լինելով, որ այդ վերոյիշեալների համար ոչ թէ մի պիտանի խրատ (որին դեռ ևս «Մեղուն» կարօտ է), կամ համեստաբար գրուածք պիտի լինի, հապա փողոցային կեղտոտ հայհոյանքներ, զրպարտութիւններ ու անձնականութեան վերաբերեալ զանազան աղտոտ բառեր կը լինեն: Մինչև երբ պիտի համբերել, ո՞ւր պիտի գնայ դոցա վերջը, չէ որ ամօթ է մի խմբագրի կողմից այդպիսի ընթացք.... Իմացանք, իմացանք վերջապէս «Մեղուի» ինչ եղածը, որչափ գիտութիւն ունեցածը.... Նորա գաղափարները մեզ հայերիս հիմա ձեռնտու չեն, մեզ այս ճգնաժամիս ազգութիւն հարկաւոր է: Հայ եղիր, իսկ ինչ կրօնի ես պատկանում, ամենևին իմ գործը չէ, մինչև անգամ, համարձակութիւն չունեմ ես քեզ հարցնելու թէ ինչ հաւատ ես պաշտում: Ազգ և ազգութիւն պէտք է մեզ, միանալ ազգով, այդ է պահանջում ժամանակը մեզանից: Բայց արի տես, որ «Մեղուի» ուղեղի մէջ կարմրացրած շիշով մինչև անգամ կարելի չէ մտցնել, այդ գաղափարը....

Թող վերջապէս հասկանայ «Մեղուն», որ «Մշակն» էր առաջինը հայ ազգութեան ամեն մի նեղութեան մէջ եղած ժամանակում ձայն հանողը, ազգին պաշտպանելու համար խրախուսողը. Թող հասկանայ «Մեղուն», որ իր ամեն գրուածքների վրա նայում է ընթերցողը արհամարհանքով, որովհետև նա դեռ հասկացած չէ, ինչ ասել է ազգութիւն և ինչ ասել է կրօն: Մենք գիտենք ինչ է գործել «Մեղուն» և ինչ է գործել «Մշակ»-ը: —Մենք մեր ասելուն ասեցինք, եթէ կամենայ «Մեղուն» թող լսէ, իսկ եթէ լսելու կը զլանայ թող մէկ կողմը դնէ իրեն կրօնական երկպառակութիւնները և այնպէս լսէ. կրօնական երկպառակութիւններ և կուսակցութիւններ ազգի մէջ հանելով չէ կարող առատ հունձք ժողովել: Ով և կամենայ թող լինի, թէ կաթօլիկ, թէ բողոքական թէ մահմետական և այլն, թող նա լինի ազգով հայ,—այն ժամանակ նա մեր եղբայրն է, մեր արիւնն է. նորա պաշտած հաւատի հետ մենք գործ չունենք, մեզ միմիայն հարկաւոր է ազգութիւն:

Հայ-Լուսաւորչական

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

4 Սեպտեմբերի

Հրապարակական դասախօսութիւններ, թատրօնական ներկայացումներ շատ հետաքրքիր չեն Շուշվայ հասարակութեան համար: Այս օրերումս պ. Ս. Մանդինեանցը պ. Անանեանցի դահլիճում բարեգործական նպատակաւ կարդաց մի դասախօսութիւն Հայաստան արած իր ճանապարհորդութեան առիթով: Դասախօսութեան ներկայ գտնվողներից մեծ մասը (բացի ուսանողներից), որոնք, կարելի է ասել, որ առաջին անգամ ներկայ էին գտնվում մի հայերէն դասախօսութեան, չը հասկանալով և չըմբռնելով պ. դասախօսի ասածները, բաւական ձգձգեցին, որովհետև նա նրանց սրտին դուրեկան մի զուարճալի և ծիծաղելի բան չը պատմեց: Այս պատճառով նրանք ափսոսում էին իրենց տուած 1 րուբլին կամ 50 կոպէկլին, մինչդեռ նրանք չեն խնայում 3 կամ 5 րուբլի վճարել և իրանց ընտանիքով երկրորդ և երրորդ անգամ ներկայ գտնվել ցիրկի յիմար խաղերին: Պ. Մանդինեանցը սխալվել էր. նա պէտք է իր յայտարարութեան մէջ աւելացնէր, թէ դասախօսութիւնից յետոյ «օյիններ» էլ են հանելու, այն ժամանակ շատ ներկայ եղողներ կը գտնվէին: Շուշվայ հայ հասարակութեան աւելի ուժեղ տարրը վաճառականներն են, որոնք միայն լաւ ճարպիկ առևտրականներ են, իսկ ազգային գործերում միշտ անտարբեր և սառն են: Համարձակ կարող եմ ասել, որ մեր թատրօնասէր երիտասարդների, որոնց պարագլուխը պ. Տ. Նազարեանցն է, ամբողջ տարի ներկայացումներ չը տալու պատճառը գլխաւորապէս մի և նոյն սառնասրտութիւնն է հասարակութեան կողմից: Մի տարի առաջ մեր երիտասարդները շատ նեղութիւններից յետոյ, հազիւ կարողացան պ. Հախումեանցի տանը մի ներկայացում տալ՝ և փոխանակ օգտի դեռ դէֆիցիտ էլ ունեցան: Առևտրի մասին խօսելով, մի բան յիշեցի, որը այս օրերս տեղի ունեցաւ: Շուշու մէջ տեղացի հարուստ աղաներից մէկը համաձայնվեց իր աղջիկը 4,000 րուբլի փողով տալ մի երիտասարդի. նշանադրութիւնից բաւական ժամանակ յետոյ յանկարծ յայտնվում է մի ուրիշը և առաջարկում է 5000 րուբլով նոյն աղջկայ հետ ամուսնանալ: Հայրը առաջին փեսացուի նշանը ետ տալով, աղջիկը տալիս է վերջինին: Էֆերիմ....ւմ առևտուր է: Ես ինձ թոյլ եմ տալիս մի համեստ խորհուրդ առաջարկել վերջին փեսացուին, որ նա նոտարիուսում մի թուղթ առնէր հարսնացուի հօրից, գուցէ մի ուրիշը 1000 րուբլով էլ բարձր կը լինէր, էն վախտը մեր պարոնի ծախերը, ի հարկէ, իզուր կը կորչէին.... Մեր մէջ այդպիսի խայտառակ դէպքեր նոր չեն պատահում: Վերջացնում եմ նամակս իմ խորին համակրութիւնս յայտնելով «Մշակի» ուղղութեանը, մանաւանդ վերջին պօլեմիկայի առիթով, որ ունեցաւ նա մի խաւարասէր լրագրի հետ: Թող «Մշակը» միշտ հաւատարիմ մնայ իր գաղափարին, թող քարոզէ նա ազգ, հայութիւն և հայրենիք. նրան եթէ չեն հասկանայ այժմ, գոնէ կը հասկանան ապագայում: Իսկ ես կը նուիրեմ խաւարասէր լրագրի պ. խմբագրին բանաստեղծի հետևեալ տողերը.

—«Կերթան այն, կանցնին այս խաւար օրերը, կը գայ երևան նոր ազգ, նոր կեանքով, նա կը գտնէ ձեր վատթար գործերը, ամօթու արձան ձեզ կանգնեցնելով:»

***

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

9 սեպտեմբերի

«Մշակը» իր հրատարակութեան օրից սկսած մեր ազգի բարոյական և մտաւոր զարգացման ու յառաջադիմութեանը մեծ զարկ է տուած. նա իր անկողմնապահ ուղղութիւնով և առողջ դատողութիւններով ու օգտաւէտ գաղափարներով ապաքէն արժանացել է ժողովրդի առանձին համակրութեանը: «Մշակի» յայտնած այն միտքը, թէ ազգութիւնը միութեան մէջ պահելու համար, կրօնի տարբերութիւնը արգելք չէ կարող լինել՝ Շամախում հայերի սրտում մեծ արձագանք գտաւ: Հայ-լուսաւորչականները և հայ-աւետարանականները, որ շատ ժամանակ չէ կրօնով բաժանված են իրարից, բայց ազգակցութեամբ և բարեկամութեամբ դարձեալ կապված են իրար հետ, միասին զգացին այդ միութեան անհրաժեշտ կարևորութիւնը, աչքի առաջ ունենալով նրա բազմակողմանի օգուտները: Գովութեան արժանի է նոյնպէս և Ս. Ներսէս Պատրիարքի բարենպատակ ձգտումը Կ. Պօլսի կրօնով բաժանված հայերի միութեան վերաբերմամբ: Երբ արդեօք մենք կունենանք այդպիսի Ներսէսներ, որ հոգ տանեն հայերիս վրա՝ մեր միջի կրօնական խտրութիւնը վերցնելու և մեզ բոլորովին միաւորելու համար.... Մեր հոգևոր առաջնորդ Թ. եպիսկոպոսը, փոխանակ մեզնից բաժանված եղբայրները մեզ հետ միացնելու և մեր մէջ սէր ու միութիւն արծարծելու, մեր լուսաւորչական հայերիս մէջ ևս գցել է կործանիչ անմիաբանութիւն, կուսակցութիւն և խռովութիւն. մինչև անգամ մերձաւոր ազգականներին և բարեկամներին միմեանց հետ թշնամացրել է: Սրբազանը շատ սառը աչքով է նայում մեր եկեղեցիների անմխիթար դրութեան վրա, նրան ամենևին փոյթ չէ, որ ժողովուրդը հեռացել է մայրենի եկեղեցուց և մեծ բազմութեամբ դիմում է օտար եկեղեցին: Նա բաւական է համարում միայն իր վարդապետով և երկու քահանաներով ժամերգութիւն կատարելը եկեղեցում: «Մշակի» 142 համարում «Հայ-լուսաւորչական» ստորագրութեամբ թղթակիցը չէ բացատրում, թէ ով է մեղաւոր, արդեօք ժողովուրդն է մեղաւոր որ եկեղեցի չէ գնում, թէ եպիսկոպոսը, որ քարոզ չէ տալիս: Այդ հարցը շատ հասկանալի է: Եթէ մեր հոգևորականները քարոզելու լինեն եկեղեցում, այն ժամանակ ժողովուրդը ջերմեռանդ սիրով կը լցվի եկեղեցին և ոչ ոք չի գնայ աւետարանականաց ժողովարանը: Ժողովուրդը փափագում է Աստուծոյ խօսքը, Աւետարանի փրկարար ձայնը լսելու, բայց երբ քարոզող չը կայ, ճարահատեալ դիմում է օտար եկեղեցի: Մեր եկեղեցիները զուրկ են մինչև անգամ բարեկարգ ու վայելուչ ժամերգութիւնից, թէև Վեհ. Հայրապետի կարգադրութեան համաձայն վճարվում է եկեղեցիներից և ուսումնարանից ձայնագրագէտ ուսուցչի վարձ, բայց մեր հոգ. առաջնորդի անհոգութեան պատճառով մինչև այսօր ոչ ոք սովորած չէ այդ արհեստը: Պ. թղթակիցը մեղադրում է հայ-լուսաւորչականներին նոցա սառնասրտութեան և անտարբերութեան մասին դէպի Վանայ մեր սովատանջ եղբայրները, բայց պարոնը թողնում է առանց ուշադրութեան, թէ եպիսկոպոսը երբ այդ կարևոր գործի համար եկեղեցու մէջ քարոզ կարդաց, երբ պատկերացրուց այս թշուառների ողբալի դրութիւնը, ինչպէս այդ ամենը արեց աւետարանականների քարոզիչ Յ. Ս. Հ. և հասաւ իր նպատակին, ժողովելով իր փոքրաթիւ հասարակութիւնից առատ նուէրք: Բայց դարձեալ փառք և պատիւ լուսաւորչական հայերին, որ մի աշխարհականի համոզմամբ չը խնայեցին իրանց օգնութիւնը սովատանջներից, որքան իրանց միջոցները կը ներէին:

Դարձնելով իմ խօսքը Շամախու երկսեռ ուսումնարանների վրա, ցաւօք սրտի պիտի ասած, որ նրանք հասած են այժմ վերջին ճգնաժամի: Հին ուսուցիչները և վարժուհին բոլորն էլ ցրված են և նոցա տեղը դեռ ոչ ոք վարձված չէ, ուստի մինչև օրս դպրոցները փակված են: Այդ նոյնպէս մեր սրբազանի անտարբերութեանը պէտք է վերաբերել: Հոգաբարձուները սրբազանի յայտնի պատճառով հրաժարված են աշխատութիւնից և ամեն գործ մնացել է առանց հոգատարութեան:

Աւետարանականների քարոզիչ Յ. Համբարձումեանը, չը նայելով իր եօթանասուն ամեայ հասակին, գիշեր և ցերեկ անդադար աշխատում է միմիայն կատարելով թէ ուսուցչի և թէ քարոզչի ծանր պաշտօնները, մինչև անգամ մերձակայ գիւղերից հայ-լուսաւորչականները կիրակի օրերը գալիս են նրա քարոզութիւնը լսելու, բայց մեր հոգևորականները անց են կացնում քէֆերով:

Սրբազանի ձեռնասուն վարդապետը ևս իր երիտասարդական հասակում ոչ մի գործի յարմար չէ, նա մի ծանր և աւելորդ բեռն է մեր վիճակի և ժողովրդի վրա: Վարդապետը ընդունակ է միայն իր անտանելի բնաւորութիւնով, նա գիտէ միայն վիրաւորել և վերադարձնել ամենին: Անցեալ օրը մէկ կրօնաւոր քահանայի, որ գործի համար գնացած է լինում կօնսիստորիան, առանց ոչինչ պատճառի վռնդում է և արտաքսում է, սպառնալով նրան սաստիկ պատիժ, եթէ միւս անգամ ոտք դնէ կօնսիստորիայն. իսկ յետոյ յայտնի եղաւ մի չնչին պատճառ, որ քահանան համարձակվել էր կարդալ «Մշակ» լրագրի այն համարը, որի մէջ նկարված էր հայր սուրբի պատկերը:

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԵՂՐԻ գիւղից գրում են. այս տարւայ բերքերը բաւական յաջող են, մանաւանդ բամբակը, որ բնակիչների գլխաւոր արդիւնաբերութիւնն է կազմում: Խաղողի բերքը, որ մի քանի տարի շարունակ փչանում էր, այս տարի համեմատաբար աւելի լաւ է:

Մեզ գրում են Շուշու գաւառի ԱՒԵՏԱՐԱՆԱՑ (Զանադչի) գիւղից, որ տեղային քահանան Ա. Ա. գրագրի պաշտօն է կատարում տանուտէրի մօտ, և երկուքը միանալով, գիւղացիներին ամեն կերպով հարստահարում են, ծեծում են, բանտարկում են, և տուգանքների են ենթարկում: Յիշեալ քահանան յայտնի է իր կռւասէր բնաւորութեամբ. պատահած մարդին հայհոյելը, նախատելը և լըրբաբար վիրաւորանքները ամեն օր նրա համար սովորական բաներ են: Դրանցից մէկը պէտք է համարել նրա գզւելի վարմունքը Մարութ-բէկ Մաթէոսեանցի հետ:

ՄԵՂՐԻ գիւղից գրում են. տեղային տանուտէրի ընտրութեան երեք տարւայ ժամանակամիջոցը լրանում է. այս տարի յոյս կայ, որ ժողովուրդը վերջապէս կազատվի այդ անտանելի մարդուց, մի նոր և աւելի բարեխիղճ տանուտէր ընտրելով: Մեղրիի փոքր թաղ կոչված մասի քահանան ամիսներով բացակայ է գտնվում իր ծուխից և գիւղացիք մնում են առանց ժամի և աղօթքի:

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ գրում են. այս տարի Նշխարէթեան և Կարապետեան դպրոցների ուսուցիչներից 175 րուբլ հաւաքվեցաւ իբր Վասպուրականի սովատանջներին ուղարկելու համար, բայց տակաւին այդ գումարը իր նպատակին չէ հասել: Ցանկանում են գիտենալ, թէ ում ձեռքումն է մնացել:

Իշխան Յ. Ա. պատասխանելով «Մշակի» № 161-ում տպված ՀԱՂԲԱՏԻՑ հաղորդված լուրին, իբր թէ հայր Խ. վարդապետը տեղոյն դպրոցի անունով փողեր է հաւաքել և տակաւին նուիրատուների նպատակի համեմատ չէ գործադրել,—այդ լուրը, գրում է իշխանը, բոլորովին սխալ է: Որովհետև արդէն չորս ամիս կը լինի, որ հայր սուրբը իր հաւաքած փողերով սկսել է նորոգել դպրոցի շէնքը, և հրաւիրել է պ. Ռ. Երզնկեանցին, որպէս ուսուցիչ. շուտով դպրոցը կը բացվի և դասատուութիւնները կը սկսվեն:

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են, թէ քաղաքի հասարակութիւնը, մանաւանդ մահմետականները ի նըկատի ունենալով այս ձմեռվայ հացի սարսափելի թանգութիւնը, և վախենալով մի գուցէ միւսանգամ կրկնվի նա, դիմեցին պ. գաւառապետին, խնդրելով, որ նա արգելէ հարչիներին ցորեան գընել և թանգացնելու նպատակով ամբարել: Որովհետև պ. գաւառապետը կարգադրութիւն չարեց,